

«ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ» ԱՌԱՍՊԵԼԻ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Է. Ա. ԴԵՎՈՐԳՅԱՆ

Հունգարահայոց «Արմենիա» ամսագրում տպագրված գրական ուշագրավ ստեղծագործություններից է «Արա Գեղեցիկ» ողբերգությունը: Այն լույս է տեսել հանդեսի 1896—1897 թթ. ամսատետրականներում և առանձին գրքով (1896, 98 էջ): Հեղինակը՝ Դավիդ Մարտոնը, հայոց միջավայրում պաշտոնավարող հունգար էր, գրականություն էր ավանդում Եղիսաբեթուպոլսի (էրժեբետվարոշի, այժմ՝ Դոմբովենի) գիմնազիայում և ուներ գրական լուրջ հակումներ: Նրա առանձին բանաստեղծությունները տպագրվում էին նաև Բուդապեշտի գրական մամուլում:

Ասորեստանցիների թագուհի Շամիրամի առ հայոց արքան տաժած կրքոտ սիրո գրավիչ պատմությունը Դ. Մարտոնը լսել էր իր պաշտոնակիցներից մեկից՝ Եղիսաբեթուպոլսի գիմնազիայի պատմության ուսուցիչ-պատմաբան Ղուկաս Ավետիքյանից (Լուկաշ Ավետիքից) և այնպես գրավվել, որ վճռել էր այդ թեմայով պատմվածք գրել: Բայց ստեղծագործական որոնումների ընթացքում, ինչպես ինքն է խոստովանում, պարզվում է, որ Արա Գեղեցիկի առասպելի գրական մշակման համար ավելի հարմար էր դրամայի ժանրը¹: Նա պատմվածքի փոխարեն գրում է հինգ գործողությամբ մի ողբերգություն և 1884 թ. մասնակցում դասական թեմաներով գրական-գեղարվեստական երկերի համահունգարական մրցանակաբաշխությանը: Ճիշտ է, «Արա Գեղեցիկը» մրցանակ չի ստանում, բայց ճանաչվում է իբրև հաջողված երկ²: Հետագայում, 1894 թ. Մարտոնը վերջնականապես վերանայում է իր գործը և երկու տարի անց հանձնում տպագրության:

Նկատի ունենալով, որ այս ուշագրավ երկը անժանոթ է հայ գրականության հավերժական առնչությունների հետազոտողներին, ավելորդ չենք գտնում համառոտ շարադրել բովանդակությունը:

Առաջին արարը բաղկացած է երեք պատկերից: Երիտասարդ և գեղեցիկ Շամիրամը (Սեմիրամիս) տեսնում է իր հանգուցյալ ամուսնուն՝ քաջարի Նինոսին: Պալատական տիկին Շամուրամուտը մխիթարում է նրան, աշխատում գուրգուրանքով ու երաժշտությամբ զվարթացնել նրան և համոզում է գնալ հանգստանալ: Շամիրամը խնդրում է, որ Զրադաշտ մոզը հսկի իր քունը: Այնուհետև Շամուրամուտի մենախոսությունից հայտնի է դառնում, որ վերջինս Նինոսի երբեմնի կինն է եղել և ասում է թագուհուն, որովհետև նա հափշտակել էր իր ամուսնուն ու կործանել: Շամուրամուտը վաղուց մտադրվել էր վրեժ լուծել Շամիրամից, բայց սպասում էր հարմար պահի, երբ նա կխոստովանի, որ արդեն երջանիկ է (սիժբախտին սպանել ես չեմ կարող, քանզի վշտացյալի

¹ Színmű az őrmény történelemből, „Armenia“, 1896, № 9, էջ 293 (այսուհետև՝ „Armenia“):

² Նույն տեղում:

համար մահը բարիք է...», — ասում է նա)³։ Զրադաշտ մոդը, որ Շամուրամուտի սիրեկանն էր, երգվում է օգնել նրան, շնայած սիրահարված էր Շամիրամին և ուզում էր, որ Շամուրամուտը մեռնի։ Շամիրամն ահավոր երազ է տեսնում և արթնանալով՝ խնդրում մոգին մեկնել այն։ Ըստ այդմ՝ թագուհին պետք է անցներ կյանքի արյունոտ ճանապարհ, գրավեր շատ տղամարդկանց սրբուհի, ավերեր բազում քաղաքներ ու երկրներ և վերջում զոհ գնար մարդասպանի դաշույնին։ Ահաբեկված Շամիրամը անասելով մոգին՝ խոսք է տալիս թողնել սուրն ու վահանը, նվիրվել խաղաղ գործերի ու երկրի բարգավաճմանը, միայն թե խուսափել կարողանա օրհասից։

Երկրորդ արարը ծավալվում է Շամիրամի բաբելոնյան պալատում։ Թագուհին ասեղնագործում է վարդեր, բայց անհանգիստ է հոգով ու ծարավի պատերազմի։ Նրա առջև փռված է մի մեծ գորգ, որի վրա նրա ստրկուհիներից յուրաքանչյուրը ասեղնագործել էր իր համար ամենից թանկ արարածի պատկերը։ Նույն պահին ներս է գալիս պալատական ճարտարապետը և զեկուցում ավարտված շինարարական գործերի մասին։ Շամիրամն աշխարհին զարմացնելու ցանկությամբ հրամայում է, որ սկսեն կառուցել կախվող պարտեզներ։ Ուշադրությամբ դիտելով գորգը՝ Շամիրամը հմայվում է հայ գերուհու՝ Ալմիրայի ասեղնագործած զեղեցիկ պատանու պատկերով։ Դա հայոց թագավոր Արան էր, որին սիրահարված էին ռհերոսական ժողովրդի բոլոր գուստերերը⁴, շնայած, Վրան սիրում էր միայն մեկին... Իր քաղցր ու սրբազան հայրենիքը⁵։ Անսպասելիորեն Շամիրամը բռնվում է անհագուրդ կրքով ու որոշում նվաճել հայոց թագավորի սիրտը։ Շամուրամուտն ու ասորական զորահրամանատար Պուլը լուր են բերում, որ Մարաստանն ապստամբել է Ասորեստանի դեմ։ Հակառակ Զրադաշտ մոգի զգուշացումներին՝ Շամիրամը հրամայում է, որ իր բանակը հայոց երկրի վրայով տանեն Մարաստան։

Հաջորդ՝ երրորդ արարի (ունի ութ պատկեր) դեպքերը ամբողջապես փոխադրվում են Հայաստան։ Քաղաքամայր Արմավիրում իշխան Չարը դավեր է նյութում թագավորի դեմ, որոնց պատճառը նախանձն էր։ Նա էլ էր ձգտում հայոց գահին և Ալմիրայի սիրուն։ Արան կերտում է Ալմիրայի անդրին ու միաժամանակ ջանում կռահել, թե ուր կորավ իր սիրած օրիորդը։ Չարը զեկուցում է, որ ասորաց թագուհին պատրաստվում է ներխուժել Հայաստան։ Նույն պահին, իբրև Շամիրամի գեսպան, ժպտված ներս է մտնում Ալմիրան և հաղորդում թագուհու ցանկությունները։ Արան մերժում է ճանապարհ տալ ասորաց զորքին հայոց հողով անցնելու Մարաստան, որովհետև ներքուստ համոզված էր, որ դա լոկ պատրվակ էր Հայաստանը զավթելու համար։ Ի դեմս ծրարված գեսպանի, Արան ճանաչում է Ալմիրային, և նրանք խոստովանում են միմյանց իրենց սերը։ Արան խնդրում է, որ Ալմիրան չվերադառնա Շամիրամի բանակը, բայց երբ լսում է, որ օրիորդն ազնիվ խոսք է տվել, դադարում է համոզել, որովհետև չի ուզում, որ Ալմիրան ուխտադրուժ հռչակվի, միաժամանակ որոշելով անձամբ ազատել նրան գերությունից։

Չորրորդ արարը ամենաընդարձակն է և ունի տասը պատկեր։ Ալմիրան ներքին ուրախությամբ հաղորդում է Շամիրամին, որ Արան մերժում է նրա

³ Márton David, Szép Ára tragoedia öt felvonásban. Szamosújvar, Aurora, 1897, էջ 14։

⁴ Նույն տեղում, էջ 39։

⁵ Նույն տեղում։

առաջարկը, նաև հասկացնում է, որ սիրում են իրար: Շամիրամը հրամայում է զնգան նետել հայ օրիորդին: Չարը պատրաստ է գործակցել Շամիրամին, միայն թե հասնի իր նպատակներին և խորհուրդ է տալիս թագուհուն՝ Ալմիրայի անունից տեսակցության կանչել Արային: Շամիրամը լավ գիտեր իր գեղեցկության ու հմայքի ուժը և կարծում էր, որ անձնական հանդիպման ժամանակ Արան կբռնկվի իր սիրով: Գիտենալով հանդերձ, որ թշնամու ճամբար մտնելը վտանգավոր էր, Արան դիմում է այնտեղ. Ալմիրայի սերը մոռացնել է տալիս ամեն դժվարություն: Հպարտ ու դաժան Շամիրամը չի քաշվում մինչև իսկ ստորանալուց, միայն թե հագուրդ տա իր մոլեգին կրքերին: Նա ծունկի է գալիս Արայի առաջ և սեր աղերսում, բայց սա մնում է անդրդում. այդպիսի սերը կարող էր միայն հակակրանք առաջ բերել հայոց արքայի հոգում: Մինչ Շամիրամը հրայրքի մեջ համբուրում է Արային և արտասանում՝ «Ես երջանիկ եմ...»⁶, թաքստոցից դուրս է գալիս Շամուրամուտը՝ դաշույնը ձեռքին: Արան խանգարում է նրան ու փրկում Շամիրամի կյանքը: Շամուրամուտին դատապարտում են մահվան:

Հինգերորդ և վերջին արարով (ունի ինը պատկեր) լուծվում է հանգույցը. հայերն Արայի առաջնորդությամբ քաջաբար կռվում են ասորեստանցիների դեմ: Ալմիրան էլ Արայի հետ է ու խիզախորեն իրեն նետում է կռվի մեջ: Չարը փակվել է հայոց արքայի պալատում և պատուհանից ուշի-ուշով հետևում է դեպքերի զարգացմանը. նրան ուրախացնում է, որ հաջողությունը թշնամու կողմն է, և ինքն անպայման կստանա հայոց թագը: Ներս է մտնում հաղթած թագուհին, հետն էլ մի զրահավորված զերի, որ, նրա կարծիքով՝ Արան պիտի լիներ, այնինչ Ալմիրան էր: Բերում են սպանված Արային: Ալմիրայի սուգը և Շամիրամի զարմանքն անասելի են: Վերջինս խստիվ հրամայել էր իր զինվորներին՝ ամեն կերպ պահպանել հայոց թագավորի կյանքը: Արքայական պալատի բակում հավաքված հայ գերիները շարդում են շղթաները և ցատկոտ պահանջում իրենց թագավորին: Չարը, որը բավականաչափ նման էր Արային, հանդերձավորվում է ու դուրս գալիս պատշգամբ, որպեսզի խաբի հաբերին: Ալմիրան դիմագերծ է անում դավաճանին: Քաղաքի օրիորդը զոհ է դառնում գազազած Շամիրամի դաշույնին: Չարը անսահման վիշտ է ապրում, իրեն համարելով սիրած աղջկա մահվան պատճառը: Շամիրամը հրամայում է նենգ դավաճանին նետել զնգան: Ողբերգությունն ավարտվում է Զրադաշտ մոգի՝ Արային ու Ալմիրային նվիրված փառաբանական խոսքերով:

«Ինչպե՞ս կարողացաք դուք սիրել, օ՛, հերոսներ,
Հաղթանակը ձերն էր, օ՛, հանգած հոգիներ,
Ձեր սերը պիտի ապրի հար ու հավետ...»⁷:

Հայ հին մատենագրության մեջ միայն Մովսես Խորենացու և Անանունի երկերում է հանդիպում Արա Գեղեցիկի կերպարը, մասամբ էլ ժողովրդի շրջանում պատմվող անգիր զրույցներում: Առասպելի արձագանքը նշմարվում է նաև ուշ միջնադարի հայ տեղանուններում: Վաղնչական դարերում մշակված այդ կերպարն էլ աստիճանաբար բյուրեղացել ու դասական ավարտվածության է հասել, որին հետագայում անդրադարձել են մի շարք հայ գրողներ (Գ. Պատ-

6 Նույն տեղում, էջ 75:

7 Նույն տեղում, էջ 88:

կանյան, Րաֆֆի, Զարենց, Զարյան), երբ փորձել են մարմին տալ հայրենի երկրի ու ընտանիքի նկատմամբ տածած անդավաճան սիրո և անմահ հերոսի թեմաներին⁸:

Հունգար բանաստեղծ Դ. Մարտոնի ողբերգությունը ևս հնագույն առասպելի հիմքի վրա ծնված սիրային պատմության նմանօրինակ մշակման նմուշ է: Արա Գեղեցիկն, իբրև դրական կերպար, մասնավորապես հայ նոր գրականության մեջ հայրենիքի նկատմամբ տածած բոցավառ սիրո և հանուն նրա շահերի, նրա անկախությանն իր անձը զոհելու գաղափարի մարմնավորում է: Հունգարական Արա Գեղեցիկը համընկնում է կերպարի այդ ավանդական մեկնաբանմանը: Դ. Մարտոնի Արան իր երկրի բախտի նկատմամբ պատասխանատվության խոր զգացման տեր անձնավորություն է, որն իր սուրբ պարտքն է համարում պաշտպանել հայրենիքն օտարերկրյա զավթիչներից: Ոչինչ ի վիճակի չէ խախտելու նրա այդ համոզումն ու հավատը՝ ո՛չ Շամիրամի գայթակղությունները, ո՛չ էլ այն ձախող իրադրությունը, որ սիրած աղջիկը գերության մեջ է:

Արայի, որպես հայրենասերի, բարոյական վեհությունն ընդգծվում է նաև նրանով, որ նա արքա լինելով հանդերձ, անկեղծ աջակցություն է գտնում իր հպատակների շրջանում: Ծիշտ է, ողբերգության մեջ որոշակիորեն չի խոսվում Արայի և ժողովրդի առնչությունների մասին, բայց բոլորովին էլ դժվար չէ բացահայտել, որ նրա համար ժողովրդի և հայրենիքի շահերը նույնանում էին: Ալմիրայի պատմելով՝ ողջ երկիրը սիրում ու քնքշանքով էր նայում Արային, բոլոր աղջիկների երազանքը նա էր: Թշնամու դեմ մղված կռիվներում միասնական կամքով են հանդես գալիս արքան և ժողովրդի ժոցից դուրս եկած նրա ռազմիկները: Կռվի դաշտում Արան ընկնում է իբրև պարզ զորական, առանց արտաբերել ինչ-որ տարբերանշան կրելու: Հինգերորդ գործողության մեջ հայ գերիները մի փափագ ունեն միայն՝ տեսնել իրենց սիրելի արքային ողջ-առողջ:

Եթե հայկական Արա Գեղեցիկը միաժամանակ և՛ հայրենասեր է, և՛ ընտանիքի սրբության գաղափարի արտահայտիչ, հունգարերեն մշակման մեջ տվյալ խնդրում համանման մոտեցումն է հանդես բերված, չնայած որ հին առասպելի հայկական մի շարք մշակումների մեջ Արայի կինը՝ նվարդ թագուհին, կենտրոնական գործող անձ է, մինչդեռ Դ. Մարտոնի Արան իրականում կին չունի և պատկերված է իբրև սիրահարված երիտասարդ, որ անապակ սիրո պաշտամունք ունի: Շեղվելով առասպելից և ողբերգության մեջ մտցնելով համապատասխան կերպար՝ Ալմիրային, «Արմենիա» հանդեսի խմբագրին ուղղված իր նամակում Դ. Մարտոնն այսպես է պատճառաբանել. «Դրա հետևանքով Արան, իբրև անապակ սիրո կողմնակից, ընդհարվում է բարոյական սկզբունքների հետ, որոնք մերժում էին սերն ընդհանրապես»⁹: Դ. Մարտոնը դրանով չէր աղավաղում հայկական առասպելը, որին նրան հաղորդակից էին դարձրել, ինչպես ասվեց, հայ պաշտոնակիցները. բուն ողբերգության մեջ, այնուհանդերձ, հիշվում է, որ Արան առաջներում ամուսնացած է եղել, բայց կինը վախճանվել էր: Նշանակում է, ըստ հունգարական մշակման, Արան կյանքում

⁸ Ա. Մ. Ին ճ ի կ յ ա ն, «Արա Գեղեցիկ» առասպելը և նրա մշակումները («Մտերի մենք» և մտորումներ»), Երևան, 1967:

⁹ «Armenia», էջ 293:

սիրել էր երկու անգամ, առանց սակայն ոտնահարելու ընտանեկան սրբությունը: Արան ջերմորեն սիրում է Ալմիրային ու նրա հանդեպ տաժած զգացմունքները անկեղծ են, ինչպես և անկեղծ ու տևական՝ նրա երբեմնի սերը հանգուցյալ կնոջ նկատմամբ: Կնոջ մահն, ասում է Մարտոնը, «խոր վերք էր թողել»¹⁰ նրա հոգում: Պետք է անցնեին շատ տարիներ, որպեսզի նա կարողանար վերստին սիրել:

Նվիրվածությունը հայրենիքին և հավատարմությունը սիրած էակին (այսինքն՝ ընտանիքին) Արայի համար անխախտ ու անբաժանելի համոզումներ կամ գաղափարներ էին: Դավաճանել սիրածին, կնշանակել դավել հայրենիքին, իսկ պաշտպանել հայրենիքը, կնշանակել անաղարտ պահել իր մեծ սերը: Արան իր պարտքն է համարում զոհաբերել կյանքը հայրենիքին, չվախենալով որ կորցնելով մեկը՝ կկորցնի և մյուսը:

Հայ ժողովրդի երևակայության մեջ հեթանոսության դարերում Արան պաշտվում էր իբրև գեղեցկության և բնության անմահության (ավելի ճիշտ՝ մեռնող և հարություն առնող բնության) աստված¹¹: Հնօրյա լեգենդի գրական մշակումների մեջ առասպելի դուցազունին փոխարինում է հայրենասեր հերոսը, որը մերժում է սերը, քանի որ այն մարմնական պահանջմունք է և կարող է մարդուն մղել հսամոլության և կործանել: Արան, իբրև հին հայոց աստված և հայրենասեր հերոս, թեև ընկնում է կռվի դաշտում, բայց ճշմարտությունն ու բարոյական գեղեցկությունն այն գաղափարների, հանուն որոնց նա զոհվում է, մնում են հավերժ ու անմահ:

Հունգար հեղինակին, հերավի, հաջողվել է շոշափերի դարձնել Արա Գեղեցիկի հմայիչ անձը և անմահ գործերը: Շամիրամը թեպետ բռնի ուժով հաղթում է և՛ Արային, և՛ Ալմիրային, բայց անզոր է հպատակեցնելու նրանց, կարողանալով միայն սպանել վեհ գաղափարների կրողներին, մինչդեռ բարձր բարոյականությունը և, առհասարակ, բարությունը մարդու մեջ մնում են հավերժ: Եվ այն, որ Արայի ու նրա սիրածի հաղթանակի մասին հիացական խոսքեր ասողը Շամիրամի մարդկանցից մեկն է՝ Զրադաշտ մոգը, դրանով առավել ընդգծվում է հեթանոս հայ աստծու մարդասիրական էությունն ու վեհությունը, որ իր արտահայտությունն է գտել նաև այդ առասպելի գրական բազմաթիվ մշակումների մեջ:

Գ. Մարտոնի ողբերգության մեջ Շամիրամի կերպարն ամբողջությամբ համընկնում է հայ հին առասպելի մշակման շնորհիվ հայտնի դարձած ավանդական կերպարին: Հեղինակն այն գրեթե չի փոխել և իր կողմից էական ոչինչ չի ավելացրել: Ասորեստանի փառամոլ թագուհին սովոր է ամեն ինչ ենթարկել սեփական կամքին ու նպատակներին և իր բոլոր արարքներում ղեկավարվում է քմահաճ հսամոլությամբ: Նա զավթողական պատերազմներ է մղում, որպեսզի ընդարձակի իր իշխանությունն ու անձնական փառքը: Նա շունի բարոյական պատասխանատվության զգացում, չի մտածում երբեք իր հպատակների բարեկեցության մասին և նրանց վրա նայում իբրև ծառրուկների հոտի»¹²: Նա ընդունակ չէ նաև իսկական սիրո: Արայի հանդեպ տաժած զգացումները արդյունք էին ցանկասիրության ու տարփանքի. նա ընդունակ է ոչ միայն

¹⁰ Marton David, նշվ. աշխ., էջ 51.

¹¹ Ա. Մ. Ինճիկյան, նշվ. աշխ., էջ 20.

¹² Marton David, նշվ. աշխ., էջ 47.

խտրել, այլև ստորանալ, անդամ անիմաստ պատերազմ սկսել, որ բերում է բազում աղետներ ու անմիտ զոհեր:

Դ. Մարտոնի մշակման մեջ կան նաև ինքնաստեղծ կերպարներ, որոնք ծառայում են երկու գլխավոր հերոսների բախման էությունն ըմբռնելուն: Այլմիտայի դերը բացատրել է հեղինակն ինքը: Այդ մասին խոսվեց վերևում: Իսկ բանասարկու Չարի մասին Մարտոնն ասում է, թե այն չափազանց «հարմար էր Արայի բնավորության ողբերգականությունը բացահայտելու տեսակետից»¹³:

Գլխավոր կերպարներն ունեն նաև իրենց զուգահեռները կամ երկորյակները, որոնց աշխարհընկալումը, վերաբերմունքը դեպի կյանքը կամ բախտը գրեթե նույնն է (Այմիրան, ինչպես և Արան ղոհվում են հանուն հայրենիքի և անապակ սիրո, իսկ Չարը, ինչպես և Շամիրամը, էությունով չար, չեն կարողանում հասնել անձնական երջանկության և այլն): Շամուրամուտի կերպարի շնորհիվ լուսաբանվում են Շամիրամի էության ինչ-որ կողմեր (նա գայթակղել էր Շամուրամուտի ամուսնուն՝ Նինոսին և դարձել նրա կինը) և կրկին ու կրկին ընդգծվում Արայի մարդասիրությունն ու մեծահոգությունն անգամ թշնամու հանդեպ (Արան խափանում է Շամուրամուտի սպանությունը Շամիրամի ձեռքով):

Դ. Մարտոնի ողբերգության մեջ Արա Գեղեցիկի նկատմամբ Շամիրամի տաժաժ սիրո սոսկական պատմությունը չէ, որ վերարտադրվել է: Այն թեև ընկած է սյուժեի հիմքում, բայց լոկ միջոց է՝ գեղարվեստորեն մարմնավորելու որոշակի գաղափարներ: Ողբերգության մեջ միմյանց են բախվում երկու բարոյականություն, մարդու և աշխարհի մասին երկու ըմբռնում: Բախումը տեղի է ունենում քնական ձևով, ինչպես և բնության երևույթները: Բարոյական բարձր ըմբռնումների փաստական կործանումը իր հերթին միջոց է անառարկելիորեն հաստատելու նրանց վեհությունը: Հետևաբար և միայն դասական ողբերգության ժանրն էր հարմար Արայի և Շամիրամի առասպելական պատմության այդօրինակ գեղարվեստական վերարտադրման համար:

Դժբախտաբար, չգիտենք, բացի պաշտոնակիցների պատմածներից Մարտոնն ուրիշ աղբյուր ունեցե՞լ է, թե՞ ոչ: Չգիտենք նմանապես Ղուկաս Ավետիքյանն ի՞նչ աղբյուրից է հիմնականում քաղել համապատասխան տվյալները ու հաղորդել նրան: Որովհետև Մարտոնի ողբերգությունը բավական մոտ է հայ ավանդական առասպելին, պիտի հավանական համարել, որ Ղ. Ավետիքյանի (հետևաբար և Մարտոնի) հիմնական աղբյուրը Խորենացու պատմագիրքն է եղել, ինչպես նաև Չամչյանի «Հայոց պատմության» առաջին հատորը:

Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելի մեջ թաքնված ներքին դրամատիզմը ճիշտ որ հնարավորություններ է ընձեռում կյանքի կոչելու մի անմահ ողբերգություն: Դ. Մարտոնի ստեղծագործությունն ունի ուրիշ շատ ուշագրավ կողմեր ևս, բայց և, ցավոք, սովերներ. հեղինակն օժտված չէր այնպիսի տաղանդով ու վարպետությամբ, որպեսզի կերտի հաջողված թատերական երկ: Մարտոնի ամենաշոշափելի նվաճումն այն է, որ դասական օրինակների հետևությունները գրված իր ողբերգության մեջ կարողացել է մարմին տալ հասուն ու հիմնավորված հայեցակետի: Բայց կառուցվածքի, լեզվի ու տաղաչափության առումով թերությունները բավականաչափ շատ են: Առանձին արաբներում (օրինակ՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ) պատկերների շատությունը,

¹³ «Armenia», էջ 293.

ինչպես նաև ավելորդ դիպվածները (օրինակ՝ երկրորդ գործողության մեջ Զրա-դաշտ մոգն ինչ-որ երկար ու ձանձրալի մի գիրք է կարդում թագուհուն զվար-ճացնելու համար) արգելակում են դրամատիկ գործողությունների ընթացքը։ Երբեմն զգացվում է հշմարտացիության և բնականության պակաս (օրինակ, միայն վերջին գործողության մեջ և անակնկալ ձևով իմացվում է, որ Զարը շատ նման է Արային և ժողովրդին խաբելու համար կարելի է նրան ասպարեզ հանել կամ էլ վիթխարի բանականեր շարժման մեջ դնող Շամիրամը կարող է վախենալ շղթայակապ գերիներից և այլն)։

Ժամանակին «Արմենիայի» էջերում հարց բարձրացվեց բեմադրելու «Արա Գեղեցիկը», որ, անտարակույս, հնարավոր կլինեի միայն ուշագիտ խմբագրու-մից հետո։ Իսկ թե առհասարակ բեմադրվե՞լ է այն ու ի՞նչ ձևով, ոչինչ հայտնի չէ առայժմ։ Եվ այնուհանդերձ՝ գեղարվեստական թերությունները չեն կարող ստվեր գցել Դ. Մարտոնի ստեղծագործության վրա։ Առասպելի հայ և օտար մշակումների մեջ (Ա. Բարիլլի, Կ. Կորոտկով, Ա. Սեմայի)¹⁴ հունգար հեղինակն ամենից մոտիկ է կանգնած ավանդական պատումին, որի պատճառը, թերևս, այն էր, որ Մարտոնը ցուցաբերում էր ոչ թե մակերեսային մոտեցում, այլ թափանցում էր առասպելի էության մեջ, ըմբռնում նրա ալլաբանական կեղևի տակ թաքնված գաղափարների վեհությունը։ Բայց որովհետև նա դա վերար-տադրել էր կլասիցիզմի արվեստագետների նախասիրած ժանրի՝ ողբերգու-թյան միջոցով, իսկ կլասիցիստներին էլ խանդավառում էին անտիկ ըմբռնում-ները, այդ պատճառով ինչ-որ չափով պահպանվում էր Արա Գեղեցիկի դիցա-բանական էությունը։

Հունգարական «Արա Գեղեցիկը» կյանքի էր կոչվել հունգարահայության մշակութային և հոգևոր զարթոնքի շրջանում։ Լիակատար ձևման դատա-պարտված հայերի համար հանուն հայրենիքի ու հայրենի օջախի սրբության զոհված հերոսի մասին խոսքերը ձեռք էին բերում մի առանձնահատուկ հմայք և արտակարգ հնչելություն։ Մենք տվյալներ չունենք պնդելու, որ Մարտոնն ուսուցողական նպատակներ է ունեցել, բայց նրա երկը հունգարահայ ընթեր-ցողներին իրենց հնագույն ու գրավիչ առասպելներից մեկի հետ ծանոթացնե-լուց բացի, առանց այլևայլության, ուներ նաև դաստիարակչական նշանակու-թյուն։

ВЕНГЕРСКАЯ ОБРАБОТКА ЛЕГЕНДЫ «АРА ПРЕКРАСНЫЙ»

Э. А. ГЕВОРГЯН

Р е з ю м е

Венгерская обработка древнеармянского мифа в жанре трагедии по классическому образцу была осуществлена Д. Мартоном, преподавателем гимназии г. Элизабетполис. Она вышла в свет отдельной книгой в 1896 г. Эта обработка представляет собой большой интерес, так как среди подобных обработок, сделанных европейскими и русским авторами, она больше всего приближается к классическому армянскому варианту.

¹⁴ Ա. Մ. Ի լ լ ի կ լ ա ն, Եզվ. աշխ.։